ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ԵՊՏՔ-Ի ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները:

Սույն ընթացակարգը հաստատում է Քոլեջի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեթոդների և մեխանիզմների նկատմամբ ընդհանուր պահանջները և ներգրավում հաշվետվողականության ապահովման բոլոր փուլերը: Սույն ընթացակարգը որակի ապահովման համակարգի բաղադրիչ մասն է, և դրա դրույթները կարող են օգտագործել բոլոր շահակիցների կողմից:

Քոլեջի արտաքին շահակիցներն են՝

- դիմորդները և նրանց ծնողները,
- աշխատաշուկայի ներկայացուցիչները (գործատուները),
- համագործակցող քոլեջները, համալսարանները և կազմակերպությունները,
- պետական կառավարման մարմինները,
- Որակի ապահովման ազգային կենտրոնը,
- ՁԼՄ-ները:

Քոլեջի ներքին շահակիցներն են՝

- ուսանողները,
- դասախոսական և վարչական կազմը:

Հաշվետվողականության ապահովման նպատակն է՝

- սահմանել հաշվետվողականության ապահովման մեթոդները և մեխանիզմները,
- ստեղծել հաշվետվողականության ապահովման միասնական համակարգ,
- հաշվետվողականության ապահովման միջոցով տեղեկացնել շահակիցներին Քոլեջի առջև դրված խնդիրների և կարիքների, ինչպես նաև արձանագրված արդյունքների մասին:

Ներքին շահակիցների տեղեկատվության ապահովման և հաշվետվողականության համար տեղեկատվության աղբյուրներն են համարում Քոլեջի ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, որոնց մասին պարբերաբար հրապարակումներ են

արվում Քոլեջի ֆեյսբուքյան էջում https://www.facebook.com/profile.php?id=100057528066500 և https://eptq.am/%d5%a3%d5%ac%d5%ad%d5%a1%d5%be%d5%b8%d6%80/:

Ներքին հաշվետվողականության ապահովման մեթոդներն են՝

- կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից Քոլեջի տնօրինությանը և մանկավարժական խորհրդին աշխատակիցների կատարած աշխատանքների ներկայացում:
- հաշվետվողականության ապահովումը Քոլեջի պաշտոնական կայքի միջոցով:

Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովում:

Արտաքին շահակիցներին հաշվետվողականության ապահովման մեթոդներն են՝

- ամբիոնների և այլ փաստաթղթերի ներկայացում Քոլեջի պաշտոնական կայքում,
- Քոլեջի գործունեության արդյունքների ներկայացում պաշտոնական կայքում,
- գիտական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացում պաշտոնական կայքում,
- ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում,
- Քոլեջի հաշվետվության ներկայացում ԿԳՄՍ նախարարություն:

Իրականացվում է հետևյալ ընթացակարգերով՝

1. հաշվետվողականության ապահովմանը ուղղված պահանջարկի ուսումնասիրություն,
2. հաշվետվողականության ապահովման գործընթացի պլանավորում,
3. միջոցառումների պլանի իրականացում,
4. գործունեության վերլուծություն և գնահատում,
5. բարելավմանը ուղղված որոշումների կայացում: